

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«30» հունիսի 2023թ.

2023 թվականի հունիսի 29-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2022 թվականի գործունեության հաշվետվության հաստատում.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական հաշվետվության հաստատում.

3. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» բյուջետային ծրագրի «11004. Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման 2023 թվականի նախահաշվի փոփոխության հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

- | | |
|-----------------|--|
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ |
| Ա. Ղուլարյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ս. Թովմասյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ա. Ադիլխանյան | ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների |

նախարարի տեղակալ (Ճանապարհային ոլորտը
համակարգող), ՀԽ անդամ
Ա. Ավանեսյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Իսախրյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Գ. Խաչատրյան ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ
անդամ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ Ա. Իսախրյանը 29.06.2023 թվականի գրությամբ խնդրել է երկարաձգել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական նիստի հեռակա քվեարկության ժամկետը 15 օրով՝ օրակարգում ընդգրկված հարցերը համակողմանի ուսումնասիրելու նպատակով: Սակայն, հաշվի առնելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի իմպերատիվ պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ հիմնադրամը՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին, ուստի 29.06.2023 թվականին հրավիրված ՀԽ նիստի հեռակա քվեարկության ժամկետը հնարավոր չի եղել երկարաձգել:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 0 դեմ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2022 թվականի գործունեության հաշվետվությունը.
2. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունը.

3. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» բյուջետային ծրագրի «11004. Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման 2023 թվականի նախահաշվի փոփոխությունը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Գ. Սանոսյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան